ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--» ----------2026թ. **N---------- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԶԱՔԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՌՑԻ ՓՈՂՈՑ Հ. 54/6 ՇԵՆՔԻ Հ. 6 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2025 թվականի ծրագրի վերաբերյալ» հ. 463-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Զաքարիա Քանաքեռցի փողոց հ. 54/6 շենքի հ.6 բնակարանն անհատույց սեփականության իրավունքով օտարել (նվիրել) Սամվել Եսայանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՔՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԶԱՔԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՌՑԻ ՓՈՂՈՑ Հ. 54/6 ՇԵՆՔԻ Հ. 6 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Զաքարիա Քանաքեռցի փողոց հ.54/6 շենքի հ.6 բնակարանն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Սամվել Եսայանին:

Զաքարիա Քանաքեռցի փողոց հ.54/6 շենքի հ.6 բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 20.05.2025թ. հ.20052025-01-0271 վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականություն:

ՌԴ ՊՆ Երևանի շրջանի բնակարանային շահագործման մասի 02.02.2010թ. օրդերին կից տալոն հ.Ա-Ա 0000 1147 -ի համաձայն Զաքարիա Սարկավագ փողոց /ներկայումս Զաքարիա Քանաքեռցի փողոց/ հ.54/6շ., հ.6 բնակարանը տրվել է Սամվել Եսայանին՝ զբաղեցնելու իրավունքով:

Զաքարիա Քանաքեռցի փողոցի հ. 54/6 շենքի հ. 6 բնակարանում 2010թ.ից փաստացի բնակվում է Սամվել Եսայանը (հիմք՝ «Կայմ-11» համատիրության տեղեկանք, տրված 23.02.2026թ.):

Ըստ ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Քանաքեռ-Զեյթուն բաժնի կողմից ներկայացված տեղեկանքի Սամվել Եսայանը (ծնված՝ 08.08.1968թ.) 23.03.2021թ.-ից մշտապես հաշվառված է քննարկվող բնակարանում:

ՀՀ կադաստրի կոմիտեի տեղեկատվության համաձայն՝ քաղաքացի Սամվել Եսայանի անվամբ ՀՀ տարածքում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 463-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 463-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ